Docusign Envelope ID: 7A4A58C6-9876-41C9-9513-C9EC1468254A

Ղեկավարության Հայտարարությունը

§ԷՔՈՒԻԹԻ ԷՅ ԷՄ¦ ՓԲԸ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

§ԷՔՈՒԻԹԻ ԷՅ ԷՄ¦ ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) ղեկավարությունը սույն հայտարարությամբ հաստատում է իր պատասխանատվությունը Ընկերության ֆինանսական վիճակի արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ընկերությունը 2025թ. հոկտեմբերի 01-ից դեկտեմբերի 31-ը հաշվետու ժամանակաշրջանի ֆինանասական հաշվետվությունները կազմել է Միջազգային ֆինանսական հաշվետվությունների ստանդարտներին համապատասխան: Ընկերությունում հաշվապահական հաշվառումն իրականացվել է §Հաշվապահական հաշվառման մասին¦ ՀՀ օրենքին, Միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտներին, գերատեսչական նորմատիվ այլ իրավական ակտերին և Ընկերության կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխան:

Ընկերության ակտիվները, պարտավորությունները, սեփական կապիտալը, հաշվեկշռային հաշիվներում հաշվառելու նպատակով Ընկերության ղեկավարությունն ընտրում և կիրառում է այնպիսի հաշվապահական հաշվառման քաղաքականություն, որ ֆինանսական հաշվետվությունների փաթեթը և դրանցում պարունակվող տեղեկատվությունը պարտադիր բավարարեն կիրառվող յուրաքանչյուր ստանդարտի բոլոր պահանջներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին:

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է՝

- հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, բաժնետերերի կողմից հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար.

- միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջների պահպանման, իսկ դրանց շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար.

- հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում կազմակերպելու համար.

- հաշվապահական հաշվառման վարման ապահովման, ֆինանսական հաշվետվությունների կազման ու ներկայացման համար.

- ֆինանսական հաշվետվությունները Ընկերության գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար, եթե առկա չէ Ընկերությունը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու հավանականությունը.

Docusign Envelope ID: 7A4A58C6-9876-41C9-9513-C9EC1468254A

- Ընկերության ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվության ապահովման, ՀՀ օրենսդրությանը և միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտների համապատասխանող հաշվապահական հաշվառման համակարգի ներդրման համար.

- Ընկերության ակտիվների պահպանության, խարդախության և անճշտությունների բացահայտման ու կանխմանն ուղղությամբ՝ իրավասությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու համար:

§ԷՔՈՒԻԹԻ ԷՅ ԷՄ¦ ՓԲԸ

Տնօրեն	DocuSigned by: Artak Nahapetyan F22E4DE502AE496...	Արտակ Նահապետյան
Գլխավոր հաշվապահ	Signed by: Knar Petrosyan 34EFD807FC4E4D7...	Քնար Պետրոսյան